

շատ մը վանքերուն, ճոխ իր շինուածքին
կարկառուն փաստերն և ամրակուռ վը-
կաներն են կողերուն մէջ փռուած սըր-
բատաշ քարերու կոյտերը, խոշոր սիւներու
և խոյակներու կոթողները հին շէնութիւնը
և փառքը պատմող, հաստաբեսատ ծառեր,
և լոյսազբիւրը որ գեռ կը շաչէ, կը շըռ-
շըռայ ամբողջ ծառաստանը, ու արտերը
արզասաւորելով. շէնքերու մնացորդը հի-
մերէն վեր հազիւ մի մի մեզը մնացած :
Հարուստ է եղած դուարով, այնպէս որ ոչ-
խարներու կաթը ագուզաներով կը հոսեցնեն
եղեր Ներքը վանք (վարի վանք): Ունե-
ցած է միաբանութիւն, բայց իրենց գոր-
ծերէն ու գործունէութենէն ոչինչ մնա-
ցած է...:

Շաբաթացեալ Ներքը վանք (վարի վանք) Պօղոս Պետրոս : Վերի վանքէն մինչեւ վարը մէկ ժամու հեռաւորութիւնով : Այս վանքն եւս ոչինչ ունի յիշատակելի անցեալի օրերէն, շէնքերու փըլատակներ կրաշաղախ որմերու, փշուր փսոր եղած սիւներու, որոնց մեծ մասը տարած շէնքերու գործածած են. երբեմի իր դաշտին գողին մնացած են քանի մը

Սերով սերելի որդին
իջևալ յերկիր ի ստորին
ի կուսէն զգեցաւ մարմին
Ծնաւ ի Բնիքեհէմին,
Աչեղ սըանչելիք լինին.
Մողք յարեւելից եկին.
Առաջնորդէր Ելյան աստեղին,
Եկեալ տեսին ծնունդ կուսին:
Առեւրը Կոյս, խորան սրբութեան,
Որ ծնար զՔրիստոս մնիսայն,
Լե՛բ բարեկասու անխափան,
Ըգմեղ պահել անսասան:

ՏԱՐ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ

աւչքարեր, ինչպէս վերի վանքինն ալ,
ու ուխտաւորներ կ'երթան աղօթելու,
ատաղներ ընելու, ըստ սովորութեան
արելու, ուտելու ու խմելու։ Իրենց շի-
ութեան թուականը ժե դարու առաջին
արիներուն պիտի լինի, երբ այսպէս
ոլորուած են Բագրատունիքը, Բինկեանի
. Երից մանկանցը, (վարի վանք)ը, Խօ-
այ վանքն եւս որ բոլորովին ուխտա-
այրի մը վերածուած էր։ Վերի վանքին
Աներերիմին մէջ կայ զիւղ մը բոլորո-
ւին աւերակ - Խոկի քէօյ - սա Աներերիմի
նակութեան յատկացուած, կամ աւելի
հշզը ամարանցի, բնագեղ տեսարանով
Համատարած լեռներու գողին, ու դիր-
ով մը անառիկ, և արդին Բերդը իր

հուսածքով կը հովանաւորէ զիւղը, հապա
արկողեր որչափ առաւել:

Ի՞նչ մտքեր արդեօք թղթին ու զրչին
ուին հոգեւինս էջեր ու տաղեր որոնք
յսօր պիտի լուսաբանէին ու լուսաւորէին
ոգեւոր աշխարհներն, ու բարոյական
արզարանին պիտոյքն առատ, ու պարտք
ազմապահանջ:

Գ. ԱՐԲԵՊԱ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

British Museum

ՄԵԿ ԱՐՁԱՆԱԳՐԻ ԽԻ ԵԽ ԶԵՌՔԻ ՄԱՍԻՆ ՈՐ «Կ'ԸՍՈՒԻ ԹԵ» ԳՏՆՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՈՒՂԻՂ, կէս դարուց ի վեր Ա. Ղազարու
տպարանից բաց թողնուած հրատարակու-
թիւնների մէջ շատ անգամ յանձնաբարուած
կայ կարգալ մենազրութիւն որ նուիրուած
է պղնձաձոյլ մէկ արձանի զլիսուն եւ զոյգ
մի ձեռների որոնք՝ երկուքն էլ՝ կը թուին
լինել՝ մուրճի հարուածներով փշրուած մէկ
ամբողջի մասեր :

Գեղարուեստի գործի հնէարաններ կ'ընդունին որ այդ փշուրբը հին յունական (400 ն. թ.) այսպէս կոչուած CNIDIAN ժամանակաշրջանի մէկ գործն է:

Հակաճառողներէ ումանք կը կարծեն թէ
դա Պըաքսիտելի մէկ երկն է. կան էլ որ
կը պնդեն թէ զա աւելի շուտ Ազոպասի
գործն է. Ոմանք կը հաւատան թէ Ափրու-
զիտէի արձանն է, ոմանք էլ կը հաւանին
թէ Աբտեմիսն է¹. բայց չգիտեմ² էլ մւմ
կողմից տարածայնուել է՝ Հայերի մէջ՝ որ
զա՝ Աբշակունեաց շրջանին Հայաստանում
պաշտուած Անահիտ աստուածունու ի պա-
տիւ կանգնեցրած մէկ արձանի վշշուրբն է:

Տասն տարի աւելի վաղ քան իմ յաշ-
ջողել ձեռքի տակ ունենալը «Յազմավկա» ի
ԽԱ. Թուահամարը յորում լոյս տեսած է
հնութեան բեկորներիս նուիրուած այդ
ուսումնասիրութիւնը, ևս, Լոնտոնում,
British Museumի Greek and Ro-
man antiquitiesի բաժնում՝ ուր պահ-
ուած կան հարցասիրութեանս առարկայ
արձանի մասունքը՝ աշխատեցայ պարզա-
ւանել՝ Միսիթ. Միաբանութեան պարբերա-
ցերթի միջոցաւ ձայնարկուած վարկածին
լաւերականութիւնն առանց կարենալու ա-
րենագոյզն չափով բաւարարել իմ հետա-
ռորութիւնը:

«Բազմւավելիք»ի ԽԱՅ. Թուահամարի մէջ

լոյս տեսած ուսումնասիրականը բարգմա-
նուրիւնն է այն ժամանակ (1883) հեղի-
նակութիւն (կ'ենթադրեմ) համարուած
գերմանացի գիտնական կանչելլանի որի
ուշադիր ընթերցումով ես ի սպառ տեղիք
չեմ գտնում այն ոգեւորուած (և մի քիչ
վերգերիկ) ներածութեան որ, Տեղեկուրիւն
վերնազրի տակ, կ'առաջնորդէ գիտնակա-
նին քննական ուսումնասիրութիւնը։ Նե-
րածութիւն տեղեկութիւնս զրոյը չէ զրել
իւր ստորագրութիւնը որով ընթերցողին
կը մնայ խորհիւլ՝ իցէ պարբերաթերթին
այն օրերի (1883 Յ. Փ.) խմբագիրն է զրա
հեղինակը։ Այս, տեղեկանալով հնութեան
փշուրբիս շուրջ խօսուած և գրուածներին,
հաճութիւն ունեցել է հաւատալ թէ դա՝
հնախօսական շօշափելի փաստ է որ կը
հաստատէ «Խորենացոյ պատմ. Բ Գրոց, ԺԲ,
ԺԴ, և Ա Ագրանեղոսի ՃԹ, ՃՓ և ՃՃԳ զր-
շուխները» և, հրճուանցով կը յայտարարէ
«Հիմա այսպիսի մեացորդօր հնուրեկանց՝ ան-
ժիսելի կերպով կը վարերանակ մեր դ և
Ե դարու մատենագիրքն որ նոր յարգ և
փառք կ'ստանան»։ Ապա, «Բնդ նմին և
գործք քաջութեան մեր Արշակունի աշ-
խարհակալաց, Հելլենական զից ընդունե-
լութիւնն ի Հայոց իրենց ազգային պաշ-
տամանց և աւանդութեանց վերածմամբ,

1. WALTER'S, «Select Bronzes». — A. H. SMITH, M. A, «Select subjects in the department of Greek and Roman antiquities, — W. R. LETHABY, «An outline History of Armenian Architecture» from notes in French by A. KETVAJIAN (Journal of the Royal Institute of British Architects, 1922 vol. XIX, N. 19).— ENGELMANN . . . (фр. qd. «Բազմական գլւու», թ. ԽII, 1883).